

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2017-2018ու. տարվա դոկտորանտուրայի ընդունելություն

1. Դաստիարակության և դասավանդման մեթոդիկա (ըստ բնագավառի)-ԺԳ.00.02

Դոկտորանտների պատրաստումն իրականացվում է առկա ուսուցմամբ, որի ժամկետը չպետք է գերազանցի 3 տարին: Դոկտորանտուրա ընդունվելը մրցութային չէ: Որպես դոկտորանտներ կարող են ձևակերպվել ՀՀ այն քաղաքացիները, ովքեր ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և զբաղվում են ակտիվ գիտական գործունեությամբ, ունեն որոշակի գիտական արդյունքներ: Դոկտորանտուրայում գտնվելու ժամանակ դոկտորանտը պետք է կատարի անհատական ծրագրով նախատեսված աշխատանքներ. ավարտի գիտությունների դոկտորի ատենախոսությունը և ՀՊՄՀ-ում անցկացնի ատենախոսության նախնական քննարկումը (պաշտպանությունը): Դոկտորանտներին վճարվում է պետական կրթաթոշակ և ամեն տարի տրամադրվում է երկամսյա արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ:

Դոկտորանտները, ասպիրանտները և հայցորդները Ակադեմիայում անվճար օգտվում են ուսուցման տեխնիկական միջոցներից, համակարգչային տեխնիկայից և զրադարանից:

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում համալսարանի ռեկտորին՝ նշելով ընտրած մասնագիտությունը:

2. Մագիստրոսի կամ բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմի եւ գնահատականների ներդիրի պատճենները, բացառությամբ այս տարվա շրջանավարտների, որոնց թույլատրվում է ներկայացնել ավարտական տեղեկանք:

3. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն եւ չորս լուսանկար (3x4 չափի):

4. Քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմորդն աշխատում է):

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև ե հունիսի 4-ը, ժամը 16.30:

Ընդունելության քննությունները կազմակերպվում են 2016թ. հունիսի 9-ից 14-ը:

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 3-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն, հեռ. 59-70-29

